ք. Երևան «07» 02 2012թ.

ՀՀ առողջապահության նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ս. Քրմոյանի, որը գործում է ՀՀ առողջապահության նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և «ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա.Ասատրյանի (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված դեղորայքը (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. Մատակարարման պայմանները

2.1 Վաճառողն Ապրանքը հասցնում է Գնորդին:

2.2 Ապարանքը մատակարարվում է սույն պայմանագրի N2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից,

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ սույն պայմանագրի 1 կետում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ապրանք.

ա) Չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետում և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7.2 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից *պարտավորությունը խախտելու հետևանքով* պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության

չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայամագիրը.

3.1.4.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը,

3.1.5 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.3 Վաճառողը իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն աղջամիտ գնով վաճառել է ապրանք համապատասխան պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և գնորդի կողմից ընդունված ապրանքը հաշվարկում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա ապրանքի քանակի հաշվին:

3.3.5 Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ

տվյալ ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքեուց հրաժարված մասնակիցը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին հանձնել ապրանքը սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.3 Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Հետ տանել Գնորդի կողմից սույն պայմանագրի 3.2.2 կետի համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.7 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.8 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.9 Սույն Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.10 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3.4.11 Թմրադեղերի մատակարարման պայմանները.

3.4.11.1 Վաճառողը Երևան քաղաքի ամբուլատոր հիվանդներին թմրադեղերը բաց է թողնում մանրածախ գներով իր ֆիրմային դեղատան մասնագիտացված բաժնից պոլիկլինիկաների կողմից տրված դեղատոմսերով (ՀՀ Կառավարության թիվ 759 որոշմամբ հաստատված դեղատոմսային ձևաթուղթ N1)

3.4.11.2 Վաճառողը մարզերի պոլիկլինիկաներին կամ հիվանդանոցներին թմրադեղերը բաց է թողնում մեծածախ գներով իր պահեստից ըստ պահանջագրերի:

3.4.11.3 Պոլիկլինիկաների կամ հիվանդանոցների կողմից ներկայացվող պահանջագրերը պետք է կնքվեն և ստորագրվեն տնօրենի կողմից, պահանջագրում պետք է նշված լինեն թմրադեղի ցանկը և պահանջվող քանակները: Թմրադեղի ստացողը պետք է ներկայացնի պոլիկլինիկայի կամ հիվանդանոցի տնօրենի կողմից հաստատված լիազորագիրը:

3.4.11.4 Վաճառողը պարտավոր է ամեն ամսվա համար մինչև հաջորդող ամսվա 15-ը ՀՀ առողջապահության նախարարությանը ներկայացնել պոլիկլինիկաների կամ հիվանդանոցների դեղատոմսերով և պահանջագրերով բաց թողնված թմրադեղերի հաշիվ-ապրանքագրերի ամփոփումը կցված հաշիվ ապրանքագրերով:

3.4.11.5 Հաշիվ ապրանքագրերի ամփոփ տվյալների հիման վրա մատակարարը ՀՀ առողջապահության նախարարության հետ կնքում է փոխադարձ հաշվարկների ակտ:

4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է՝ 913612740 (ինը հարյուր տասներեք միլիոն վեց հարյուր տասներկու հազար յոթ հարյուր քառասուն) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Յուրաքանչյուր ապրանքատեսակի միավորի գինը սահմանված է սույն պայմանագրի N2 հավելվածում: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա N3 հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումը կատարվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի համար վճարելու վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները բավարարում են:

5. Ապրանքի որակը և երաշխիքը

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համար:

5.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքը ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացույցային օրը:

5.2.1 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ: Վաճառողը ապրանքի հանձնման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N4):

6.2 Արձանագրությունը ստորագրվում է եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից սույն պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ՝ 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրորդական) տոկոսի չափով, որը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

7.3 Սույն պայմանագրի 1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.4 Սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.5 Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

7.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Այլ պայմաններ

9.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման և գնման ընթացակարգի արդյունքների հաստատման մասին ՀՀ կառավարության որոշման ընդունման պահից:

9.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ)

վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև պայմանագրի կնքումը կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, գնորդը իրավունք ունի միակողմանի լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ գնորդի ստացածով:

9.3Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի:

2) Սույն պայմանագրով նախատեսված ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերում: Շուկայական գները որոշվում են և դրանց փոփոխությունները գնահատվում են ՀՀ Կառավարության 10.02.11թ. թիվ 168-Ն որոշման համաձայն.

Սույն պայմանագրում չի կարող կատարվել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքների ծավալների կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

9.4 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (վաճառող և (կամ) գնորդ) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվալ կողմից օգուտը կամ կրած վնասն են.

Սույն պայմանագրի կողմերի երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները ներառյալ պայամնագրի կատարման շրջանակում վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայամանգրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայամնագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով և դրանց համար պատասխանատու է պատվիրատուի հետ պայամնագիր կնքած անձը:

9.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

9.6 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի NN 1, 2 3 և 4 հավելվածները՝ բաղկացած __ թերթից հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայամնագրի մեկ օրինակ:

9.7 Սույն պայմանագրից ծագած կողմից վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.8 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ առողջապահության նախարարություն, ք.Երևան,Կառավարական. տ. 3 ՀՎՀՀ 02507171 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011105237 էլ. հասցեն՝ info@moh.am	«ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ» ՍՊԸ, ք. Երևան, Տիչինայի փ. 3-րդ նրբանցք, 2/2 «Ամերիաբանկ» ՓԲԸ Հ/Հ 1570005065330100 ՀՎՀՀ 01222567 էլ. հասցեն՝ natalipharm@bk.ru Հեռ. (010) 74-42-12
(ստորագրություն) Կ.Տ	(ստորագրություն) Կ.Տ

Հավելված N 1

« » « » 2012թ. կնքված

N ՇՀԱՊՁԲ - 11/4-7-ԱՆ գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐ

Գնման առարկայի անվանումը	**Լևոմեպրոմազին 25 մգ**
Գնման առարկայի որակական տվյալները, չափերը	դեղահատ
Անվտանգությունը	Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը)
Նշանադրումը	Ապրանքային նշանի առկայությունը
Պայմանական նշանները	վախենում է խոնավությունից
Գնման առարկայի անվանումը	**Տրիհեքսիֆենիդիլ 2 մգ**
Գնման առարկայի որակական տվյալները, չափերը	դեղահատ
Անվտանգությունը	Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթությունը)
Նշանադրումը	Ապրանքային նշանի առկայությունը
Պայմանական նշանները	վախենում է խոնավությունից
Գնման առարկայի անվանումը	**Տակրոլիմուս 1մգ**
Գնման առարկայի որակական տվյալները, չափերը	դեղապատիճ
Անվտանգությունը	Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթությունը)
Նշանադրումը	Ապրանքային նշանի առկայությունը
Պայմանական նշանները	վախենում է խոնավությունից
Գնման առարկայի անվանումը	**Մոֆետիլ միկոֆենոլատ 250 մգ**
Գնման առարկայի որակական տվյալները, չափերը	դեղապատիճ
Անվտանգությունը	Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթությունը)
Նշանադրումը	Ապրանքային նշանի առկայությունը
Պայմանական նշանները	վախենում է խոնավությունից
Գնման առարկայի անվանումը	**Ցիկլոսպորին 100 մգ/մլ լուծույթ խմելու 50 մլ ****
Գնման առարկայի որակական տվյալները, չափերը	22հկ
Անվտանգությունը	Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթությունը)
Նշանադրումը	Ապրանքային նշանի առկայությունը
Պայմանական նշանները	կոտրվող է
Գնման առարկայի անվանումը	**Ցիկլոսպորին 100 մգ**
Գնման առարկայի որակական տվյալները, չափերը	դեղապատիճ
Անվտանգությունը	Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը)
Նշանադրումը	Ապրանքային նշանի առկայությունը

Պայմանական նշանները	վախենում է խոնավությունից
Գնման առարկայի անվանումը	**Ինտերֆերոն ալֆա 2-a 3 միլիոն ՄՄ/0.5մլ**
Գնման առարկայի որակական տվյալները, չափերը	նախալցված ներարկիչներ
Անվտանգությունը	Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթությունը)
Նշանադրումը	Ապրանքային նշանի առկայությունը
Պայմանական նշանները	կոտրվող է
Գնման առարկայի անվանումը	**Ֆլուֆենազին 25մգ/1մլ լուծույթ ներարկման**
Գնման առարկայի որակական տվյալները, չափերը	սրվակ
Անվտանգությունը	Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը)
Նշանադրումը	Ապրանքային նշանի առկայությունը
Պայմանական նշանները	կոտրվող է
Գնման առարկայի անվանումը	**Ֆտորուրացիլ 250մգ/5մլ խտանյութ կաթիլաներարկման լուծույթի**
Գնման առարկայի որակական տվյալները, չափերը	սրվակ
Անվտանգությունը	Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթությունը)
Նշանադրումը	Ապրանքային նշանի առկայությունը
Պայմանական նշանները	կոտրվող է
Գնման առարկայի անվանումը	**Ռիտուքսիմաբ 100 մգ/10 մլ խտանյութ կաթիլաներակման լուծույթի**
Գնման առարկայի որակական տվյալները, չափերը	սրվակ
Անվտանգությունը	Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթությունը)
Նշանադրումը	Ապրանքային նշանի առկայությունը
Պայմանական նշանները	կոտրվող է
Գնման առարկայի անվանումը	**Ցիսպլատին 50 մգ/100 մլ խտանյութ կաթիլաներակման լուծույթի**
Գնման առարկայի որակական տվյալները, չափերը	սրվակ
Անվտանգությունը	Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթությունը)
Նշանադրումը	Ապրանքային նշանի առկայությունը
Պայմանական նշանները	կոտրվող է
Գնման առարկայի անվանումը	**Ֆենիլ ալանին չպարունակող մանկական կեր-0**
Գնման առարկայի որակական տվյալները, չափերը	գրամ
Անվտանգությունը	Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն(տես ծանոթությունը)
Նշանադրումը	Ապրանքային նշանի առկայությունը
Պայմանական նշանները	վախենում է խոնավությունից
Գնման առարկայի անվանումը	**Ֆենիլ ալանին չպարունակող մանկական կեր-1**

Գնման առարկայի որակական տվյալները, չափերը	գրամ
Անվտանգությունը	Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն(տես ծանոթությունը)
Նշանադրումը	Ապրանքային նշանի առկայությունը
Պայմանական նշանները	վախենում է խոնավությունից
Գնման առարկայի անվանումը	**Մարդու արյան մակարդման VIII գործոն դեղափոշի լիոֆիլիզացված ն/ե ներարկման լուծույթի 500ՄՄ, սրվակ դեղափոշով և սրվակ 5մլ լուծչով**
Գնման առարկայի որակական տվյալները, չափերը	սրվակ
Անվտանգությունը	Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթությունը)
Նշանադրումը	Ապրանքային նշանի առկայությունը
Պայմանական նշանները	կոտրվող է
Գնման առարկայի անվանումը	**Ինսուլին կարճատև ազդեցության մարդկային 100 ՄՄ***
Գնման առարկայի որակական տվյալները, չափերը	սրվակ
Անվտանգությունը	Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայությունm(տես ծանոթությունը)
Նշանադրումը	Ապրանքային նշանի առկայությունը
Պայմանական նշանները	կոտրվող է
Գնման առարկայի անվանումը	**Ինսուլին միջին ազդեցության մարդկային 100 ՄՄ***
Գնման առարկայի որակական տվյալները, չափերը	սրվակ
Անվտանգությունը	Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթությունը)
Նշանադրումը	Ապրանքային նշանի առկայությունը
Պայմանական նշանները	կոտրվող է
Գնման առարկայի անվանումը	**Ինսուլին 30/70 կարճատև և միջին ազդեցության խառնուրդ մարդկային 100 ՄՄ***
Գնման առարկայի որակական տվյալները, չափերը	սրվակ
Անվտանգությունը	Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթությունը)
Նշանադրումը	Ապրանքային նշանի առկայությունը
Պայմանական նշանները	կոտրվող է
Գնման առարկայի անվանումը	**Էրիտրոպոէտին բետտա 2000ՄՄ/մլ**
Գնման առարկայի որակական տվյալները, չափերը	նախալցված ներարկիչներ
Անվտանգությունը	Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթությունը)
Նշանադրումը	Ապրանքային նշանի առկայությունը
Պայմանական նշանները	կոտրվող է
Գնման առարկայի անվանումը	**Ցիկլոֆոսֆամիդ 0,2 գ դեղափոշի ներարկման լուծույթի**
Գնման առարկայի որակական տվյալները, չափերը	սրվակ
Անվտանգությունը	Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթությունը)

Նշանադրումը	Ապրանքային նշանի առկայությունը
Պայմանական նշանները	կոտրվող է

ԳՆՈՐԴ
ՀՀ առողջապահության
նախարարություն
ք.Երևան,Կառավարական. տ. 3
ՀՎՀՀ 02507171
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ 900011105237
Էլ. հասցեն՝ info@moh.am

(ստորագրություն)

ՎԱՃԱՌՈՂ
«ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ» ՍՊԸ,
ք. Երևան, Տիչինայի փ. 3-րդ նրբանցք, 2/2
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570005065330100
ՀՎՀՀ 01222567
Էլ. հասցեն՝ natalipharm@bk.ru
Հեռ. (010) 74-42-12

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 2
« » « » 2012թ. կնքված
N ՇՀԱՊՁԲ - 11/4-7-ԱՆ գնման պայմանագրի

Գնման ժամանակացույց

Իրականացվող ծրագիրը ***07 01 01 01 Դեղորայքի տրամադրում ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց***

Ծրագիրն իրականացնող Հիմնարկի անունը ***ՀՀ առողջապահության նախարարություն***

հազ.դրամ

	Չափաբաժին	Գնման ենթակա ապրանքների անվանումները			Նախատեսվում է գնել								Ընդամենը	
		Անվանումը	Չափի միավորը	Գինը /դրամ/	Գնման ընթացակարգի արդյունքների ընդունման մասին ՀՀ կառավարության որոշման ընդունման ուժի մեջ մտնելու օրից 40 օր հետո		Գնման ընթացակարգի արդյունքների ընդունման մասին ՀՀ կառավարության որոշման ընդունման ուժի մեջ մտնելու օրից հետո 60 օրերի ընթացքում		Գնման ընթացակարգի արդյունքների ընդունման մասին ՀՀ կառավարության որոշման ընդունման ուժի մեջ մտնելու օրից հետո 150 օրերի ընթացքում		Գնման ընթացակարգի արդյունքների ընդունման մասին ՀՀ կառավարության որոշման ընդունման ուժի մեջ մտնելու օրից հետո 240 օրերի ընթացքում					
					Քանակ	Գումար	Քանակ	Գումար	Քանակ	Գումար	Քանակ	Գումար	Քանակ	Գումար
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
1	3	Ֆլուֆենազին 25 մգ/1 մլ	սրվակ	727	3000	2181,00	3750	2726,25	4500	3271,50	3750	2726,25	15000	10905,000
2	6	Տրիհեքսիֆենիդիլ 2 մգ	դեղահատ	5,88	180000	1058,40	225000	1323,00	270000	1587,60	225000	1323,00	900000	5292,000
3	11	Լևոմեպրոմազին 25 մգ	դեղահատ	31,87	30000	956,10	37500	1195,13	45000	1434,15	37500	1195,13	150000	4780,500
4	19	Ինսուլին կարճատև ազդեցության մարդկային 100 ՄՄ	սրվակ, /1մլ=100 ՄՄ/	480	73910	35476,80	92385	44344,80	110865	53215,20	92390	44347,20	369550	177384,000
5	20	Ինսուլին միջին ազդեցության մարդկային 100 ՄՄ	սրվակ, /1մլ=100 ՄՄ/	480	110865	53215,20	138580	66518,40	166300	79824,00	138585	66520,80	554330	266078,400
6	21	Ինսուլին 30/70 կարճատև և միջին ազդեցության խառնուրդ մարդկային 100 ՄՄ	սրվակ, /1մլ=100 ՄՄ/	480	13750	6600,00	17190	8251,20	20630	9902,40	17200	8256,00	68770	33009,600
7	25	Էրիտրոպոէտին բետտա 2000 ՄՄ	սրվակ	8625	4800	41400,00	6000	51750,00	7200	62100,00	6000	51750,00	24000	207000,000
8	26	Միկոֆենոլատի մոֆետիլ 250 մգ	դեղապատիճ	605	15340	9280,70	19175	11600,88	23010	13921,05	19175	11600,88	76700	46403,500
9	27	Ցիկլոսպորին 100ՄՄ/մլ 50 մլ	սրվակ	32565	200	6513,00	250	8141,25	300	9769,50	250	8141,25	1000	32565,000
10	28	Ցիկլոսպորին 100 մգ	դեղապատիճ	1618	200	323,60	250	404,50	300	485,40	250	404,50	1000	1618,000
11	29	Տակրոլիմուս 1 մգ	դեղապատիճ	2565	1192	3057,48	1490	3821,85	1788	4586,22	1490	3821,85	5960	15287,400
12	30	Ֆենիլ ալանին չպարունակող մանկական կեր -0գ	գրամ	36,4	3792	138,03	4746	172,75	5696	207,33	4747	172,79	18981	690,908
13	31	Ֆենիլ ալանին չպարունակող մանկական կեր - 1գ	գրամ	40,2	30040	1207,61	37550	1509,51	45060	1811,41	37550	1509,51	150200	6038,040
14	35	Ռիտուքսիմաբ 100 մգ/10 մլ	սրվակ	167453	15	2511,80	0	0,00	5	837,27	0	0,00	20	3349,060

15	36	Ինտերֆերոն ալֆա 2-Ա 3ՄՄ	սրվակ	12846	270	3468,42	337	4329,10	405	5202,63	338	4341,95	1350	17342,100
16	37	Ֆտորուրացիլ 5% 5 մլ	սրվակ	538	1295	696,71	1618	870,48	1943	1045,33	1618	870,48	6474	3483,012
17	38	Ցիսպլատին 50 մգ/100 մլ	սրվակ	4406	400	1762,40	500	2203,00	600	2643,60	500	2203,00	2000	8812,000
18	41	Ցիկլոֆոսֆամիդ 0,2 գ	սրվակ	257	1200	308,40	1500	385,50	1800	462,60	1500	385,50	6000	1542,000
19	42	Հակահեմոֆիլիկ 8-րդ գործոն 500 ՄՄ	սրվակ	108810	120	13057,20	169	18388,89	201	21870,81	172	18715,32	662	72032,220
		Ընդամենը				**183212,84**		**227936,49**		**274178,01**		**228285,40**		**913612,740**

Ծանոթություն

2,5 տարուց ավելի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային պիտանիության ժամկետ, 2,5 տարի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձման պահին պետք է ունենան դեղի ընդհանուր պիտանելիության ժամկետի առնվազն 2/3-րդը, իսկ մինչև 2 տարի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձման պահին պետք է ունենան դեղի ընդհանուր պիտանելիության ժամկետի առնվազն1/2, * -ով դեղերը հանձման պահին պետք է ունենան դեղի ընդհանուր պիտանելիության ժամկետի առնվազն1/2, **-ով դեղերը հանձման պահին պետք է ունենան դեղի ընդհանուր պիտանելիության ժամկետի առնվազն 1/2 :

ԳՆՈՐԴ

ՀՀ առողջապահության նախարարություն
ք.Երևան,Կառավարական. տ. 4
ՀՎՀՀ 02507172
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչություն
հ/հ 900011105237
էլ. հասցեն՝ info@moh.am

(ստորագրություն)
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ» ՍՊԸ,
ք. Երևան, Տիչինայի փ. 3-րդ նրբանցք, 2/2
«Ամերիաբանկ» ՓԲԸ
հ/հ 1570005065330100
ՀՎՀՀ 01222567
էլ. հասցեն՝ natalipharm@bk.ru
Հեռ. (010) 74-42-12

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 3
« » « » 2012թ. կնքված
N ՇՀԱՊՁԲ - 11/4-7–ԱՆ գնման պայմանագրի

Վճարման ժամանակացույց

N	Գնման ենթակա ապրանքների և ծառայությունների	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2012թ. բյուջետային միջոցների հաշվին, ընդ որում՝												ԸՆԴԱՄԵՆԸ ՏԱՐԵԿԱՆ
	Անվանումը	հունվ.	փետրվ.	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստ	սեպտ	հոկտ.	նոյեմբ.	դեկտ.	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
Ծրագիրը								բաժին 07 խումբ 06 դաս 01ծրագիր 01						Հ/Հ 900011105237
1	Դեղորայք		20%	20%	45%	45%	45%	75%	75%	75%	100%	100%	100%	100%
ԸՆԴԱՄԵՆԸ														

ԳՆՈՐԴ
ՀՀ առողջապահության
նախարարություն
ք.Երևան,Կառավարական. տ. 3
ՀՎՀՀ 02507171
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի
գործառնական վարչություն
հշ.900011105237
էլ.հասցեն՝ info@moh.am

(ստորագրություն)

ՎԱՃԱՌՈՂ
«ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ» ՍՊԸ,
ք. Երևան, Տիչինայի փ. 3-րդ
նրբանցք, 2/2
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570005065330100
ՀՎՀՀ 01222567
էլ. հասցեն՝ natalipharm@bk.ru
Հեռ. (010) 74-42-12

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 4
«__» _____ 2__թ. կնքված
N _____ պայմանագրի հավելված

Գնորդ	Վաճառող
_____	_____
_____	_____
_____	_____
հասցե_____	հասցե_____
հհ_____	հհ_____
	_____
	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ___

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«__» _____ 2__թ.
Պայմանագրի անվանումը՝ «_____»:
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «__» _____ 2__թ
(Համաձայնագրի կնքման ամսաթիվը)
Պայմանագրի համարը՝ _____

Գնորդն, ի դեմս _____ և Մատակարարն՝ ի դեմս _____, հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրի (Համաձայնագրի) կատարման վերաբերյալ «__» _____ 2__թ կազմված պատասխանատու ստորաբաժանման N_ ___ եզրակացությունը, այն մասին, որ պայմանագրով (Համաձայնագրով) նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները (այսուհետև՝ Մատակարարում) համապատասխանում են պայմանագրով (Համաձայնագրով) ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի (Համաձայնագրի) շրջանակներում Վաճառողը «__» _____ 2__թ.-ից «__» _____ 2__թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ Մատակարարումները

Մատակարարման համառոտ նկարագիրը	Մատակարարման քանակական ցուցանիշները	Մատակարա-րումների ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Ընդամենը	----------	----------		-------

Վերոհիշյալ Մատակարարումների իրականացման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքն ընդունեց
_____ (ստորագրություն)	_____ (ստորագրություն)
ազգանուն _____	ազգանուն _____
__	__